

Թագաւոր մըն ալ ունեցած ենք (1), ինչո՞ւ այս ցանկին մէջ չէ մտած Ֆիլիպը : — Պատճառը չատ պարզ է . Ֆիլիպ ամուսնանալով Հայոց Թագաւորութեան իսկական ժառանգորդ Չապէլի հետ, կառավարելու գործին մէջ սոսկ օգնական ընկեր մըն էր Չապէլի, եւ ոչ թէ բուն Թագակիր եւ օժուած Թագաւոր, թէեւ կը կրէր « Թագաւոր » տիտղոսը : Իշխանութիւնը Չապէլի'նն էր : Փաստեր պակաս չեն հաստատելու համար այս համոզումը : Յիշեմ մէկ քանին . 1) Դարդել բացարձակ կերպով կըսէ (եր . 16) թէ « Թագաւորեցին Ֆիլիպ եւ տիկինն Չապէլ ի միասին » . 2) Ֆիլիպ իր աներոջմէն (Լեւոն Ա) մնացած արքայական թագին ու գահին տէրը չէր, եթէ ոչ իր հօրը չէր զրկեր զանոնք . 3) Ֆիլիպ երբեք դրամ տպած չէ, 4) մինչդեռ Չապէլի երկրորդ ամուսինը Հեթում՝ տպած է, որուն վրայ Չապէլ պատուի առաջին տեղը կը գրաւէ, ինչան իր՝ Հեթումի վրայ ունեցած առաւելութեան . 5) ժամանակակից պատմիչ մը, Վահրամ, Ֆիլիպի անո՛ւնըն անգամ չի յիշեր . նոյնպէս նաեւ Տ. Ստեփ . Լուսինեան . 6) Դիւ Կանժի, Դիւլորիէի, Լանգլուայի, եւ այլոց վերջին Լեւոնի « հինգերորդ լատին արքայ Հայոց » ընդունելէն կը հետեւի, թէ անո՛նք ալ Ֆիլիպի իշխանութիւնը՝ Թագաւորութեան համազօր չեն նկատած, որով դուրս ձգած են իրենց ցանկէն, ապա թէ ոչ պէտք էր ըսէին — վեցերորդ լատին արքայ Հայոց (2) :

Երկու Կոստանդիններու մասին պիտի խօսիմ վարը :



(1) Տե՛ս վերն եր . 12 :

(2) ՈՒՂԱԵԼԻՔ . — Վերն եր . 16, տու 8՝ « Լափնացեյ » բառին տեղ կարդալ — Լուսինեան տնմէ Լափն քագաւորներէն եւայլն . իսկ նոյն երես, տու 26՝ կարդալ — քէ Լուսինեան տնմէ « հինգ » եւայլն :